



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ԵՐԱՆՈՍՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 13916/06)

ՎՃԻՌ

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

20 հուլիսի 2010թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

20/10/2010

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

Երանոսյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ժոզեփ Բասադեւալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Էլիզաբեթ Ֆուրա [Elisabet Fura],

Բոշտյան Մ. Զուպանչիչ [Boštjan M. Zupančič],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Ինետա Զիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Էն Փաուեր [Ann Power]՝ *դատավորներ,*

եւ Սանտյագո Կեսադա [Santiago Quesada]՝ Բաժանմունքի քարտուղար,

2010 թվականի հունիսի 29-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,
կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի ութ քաղաքացիներ պրն Վահան Երանոսյանի, պրն Վարդան Երանոսյանի, տկն Ռուզաննա Երանոսյանի, պրն Տարոն Երանոսյանի, տկն Սյուզաննա Երանոսյանի, պրն Արսեն Գրիգորյանի, տկն Լիլիթ Գրիգորյանի եւ տկն Սիրանուշ Խաչատրյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2006 թվականի մարտի 21-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 13916/06) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Գ. Մարգարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2007 թվականի սեպտեմբերի 28-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է գանգատի մասին ծանուցել Կառավարությանը: Որոշվել է նաև գանգատի ըստ էության քննությունն իրականացնել դրա ընդունելիության հարցի քննության հետ միաժամանակ (29-րդ հոդվածի 3-րդ կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար՝ 1976 թվականին, 1975 թվականին, 1971 թվականին, 2001 թվականին, 2004 թվականին, 1994 թվականին, 1999 թվականին, 1978 թվականին եւ ապրում են Երեւան քաղաքում:

5. Դիմումատուներն իրենց պնդմամբ Երեւան քաղաքի Բուզանդի 15 հասցեում գտնվող 60.2 քառ. մետր մակերեսով տան նկատմամբ ունեցել են բնակելի տարածության օգտագործման իրավունք: Տունը սեփականության իրավունքով պատկանել է իրենց ընտանիքի անդամ Ա.Ե.-ին: Կառավարությունը վիճարկել է այս պնդումը եւ նշել, որ միայն դիմումատուներ Վահան Երանոսյանը, Վարդան Երանոսյանը, Ռուզաննա Երանոսյանը եւ Սիրանուշ Խաչատրյանն են ունեցել նման իրավունք, մինչդեռ մնացած դիմումատուները, որոնք եղել են անչափահասներ, միայն ունեցել են քննարկվող տանը բնակվելու իրավունք:

6. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր եւ շինություններ) օտարման գոտիները՝ 345 000 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

Բուզանդի փողոցը ներառված է եղել օտարման այդ գոտիներում ընդգրկված փողոցների ցանկում:

7. 2004 թվականի հունիսի 17-ին Կառավարությունն ընդունել է որոշում, որով [Երեւանի քաղաքապետին] թույլատրվել է Բուզանդի փողոցի հատվածներից մեկի վերաբերյալ (որը պետք է վերանվանվեր Գլխավոր պողոտա) կառուցապատման իրավունքի պայմանագիր կնքել մասնավոր ընկերություններից մեկի՝ «Վիզկոն» ՍՊԸ-ի հետ:

8. 2004 թվականի հոկտեմբերի 1-ին «Վիզկոն» ՍՊԸ-ի եւ Երեւանի քաղաքապետարանի միջեւ կնքվել է պայմանագիր, որով, *inter alia* (*ի թիվս այլնի*), վերջինիս իրավունք է վերապահվել ուղղակիորեն բանակցել օտարման ենթակա գույքի սեփականատերերի հետ, իսկ բանակցությունների ձախողման դեպքում՝ պետության անունից հայց հարուցել դատարան՝ այդ գույքի հարկադիր օտարման պահանջով:

9. Պարզվել է, որ 2005 թվականի հունիսի 8-ի գրությամբ «Վիզկոն» ՍՊԸ-ն դիմումատուներին տեղեկացրել է, որ քննարկվող տունը գտնվում է Գլխավոր պողոտայի տարածքի օտարման գոտում եւ պետք է վերցվի պետության կարիքների համար: Այնուհետեւ, պարզվել է, որ յուրաքանչյուր դիմումատուի առաջարկվել է 2 000 ԱՄՆ դոլարին համարժեք փոխհատուցում:

10. Ինչպես պարզվել է, դիմումատուները չեն ընդունել այդ առաջարկը:

11. Չպարզված օրը «Վիզկոն» ՍՊԸ-ն պետության անունից հայց է հարուցել դիմումատուների դեմ՝ նրանց՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը դադարեցնելու եւ նրանց վտարելու պահանջով:

12. 2005 թվականի հունիսի 30-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանը բավարարել է «Վիզկոն» ՍՊԸ-ի հայցը՝ դադարեցնելով դիմումատուների օգտագործման իրավունքը եւ յուրաքանչյուրին շնորհելով փոխհատուցում՝ 2 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով: Դատարանն իր որոշումը հիմնավորել է ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասով:

13. 2005 թվականի հուլիսի 15-ին դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացրել:

14. 2005 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը բավարարել է «Վիզկոն» ՍՊԸ-ի պահանջը նույն հիմքերով, ինչ համայնքի դատարանը:

15. 2005 թվականի օգոստոսի 22-ին դիմումատուները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որում նրանց կողմից կատարվել է լրացում 2005 թվականի սեպտեմբերի 19-ին:

16. 2005 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուների բողոքը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

17. Բնակելի տարածության օգտագործման իրավունքի վերաբերյալ ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համառոտ շարադրանքը տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի [Minasyan and Semerjyan v. Armenia]* գործով վճիռը (թիվ 27651/05, §§36-43, 2009 թվականի հունիսի 23):

18. Տվյալ ժամանակահատվածում գործող Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է եղել, որ հողամասը սեփականատիրոջից կարող է վերցվել պետության կամ համայնքի կարիքների համար՝ դրա գինը հատուցելու միջոցով: Կախված այն բանից, թե ում կարիքների համար է վերցվում հողամասը, դրա գինը հատուցում է պետությունը կամ համայնքը:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ
ԽԱԽՏՈՒՄԸ

19. Դիմումատուները բողոքել են, որ իրենց գույքից զրկելը հանգեցրել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված երաշխիքների խախտման, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք այն անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Կողմերի փաստարկները

20. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների բողոքը *ratione materiae* (առարկայական ընդհատության առումով) չի համապատասխանում թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին: Մասնավորապես, դիմումատուները չեն ունեցել գույք այդ հոդվածի իմաստով, քանի որ նրանք չեն ունեցել սեփականության իրավունք քննարկվող տան նկատմամբ: Տան միակ սեփականատերը եղել է երրորդ անձ՝ Ա.Ե-ն, մինչդեռ դիմումատուներն այդ տան նկատմամբ ունեցել են միայն բնակելի տարածության օգտագործման իրավունք, ինչը հավասարագոր է այնտեղ բնակվելու իրավունքին եւ չի կարող դիտարկվել «գույք» հասկացությանը համարժեք:

21. Ավելին, դիմումատուներ Տարոն Երանոսյանը, Սյուզաննա Երանոսյանը, Արսեն Գրիգորյանը եւ Լիլիթ Գրիգորյանը նույնիսկ չեն ունեցել առանձին օգտագործման իրավունք, քանի որ նրանք [այդ ժամանակ] եղել են անչափահաս եւ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի ուժով միայն

ունեցել են այդ տանն իրենց ծնողների (մյուս դիմումատուների) հետ համատեղ բնակվելու իրավունք: Այսպիսով, դիմումատուների բողոքը դուրս է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի գործողության շրջանակներից:

22. Դիմումատուները սահմանված ժամկետում չեն ներկայացրել իրենց դիտարկումները՝ [զանգատի] ընդունելիության եւ ըստ էության քննության վերաբերյալ:

Բ. Դատարանի գնահատականը

1. Ընդունելիությունը

23. Դատարանը համարում է, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին դիմումատուների բողոքի անհամապատասխանության հարցի վերաբերյալ Կառավարության առարկությունը սերտորեն կապված է դիմումատուների՝ տվյալ հոդվածի համաձայն ներկայացված բողոքի էության հետ, ուստի այն պետք է միացվի գործի ըստ էության քննությանը:

24. Դատարանը նշում է, որ դիմումատուների՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն ներկայացված բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

2. *Ըստ էության քննությունը*

ա) **Արդյոք տեղի է ունեցել միջամտություն գույքից օգտվելու իրավունքին**

25. Դատարանը նշում է, որ Կառավարության պնդմամբ դիմումատուները Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով չեն ունեցել «գույք»: Դատարանն այնուհանդերձ նշում է, որ ինչպես արդեն պարզել է, բնակելի տարածության օգտագործման իրավունքը տվյալ հոդվածի իմաստով «գույք» է (տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* գործը՝ վերելում հիշատակված, § 56):

26. Ինչ վերաբերում է հատկապես դիմումատուներ Տարոն Երանոսյանին, Սյուզաննա Երանոսյանին, Արսեն Գրիգորյանին եւ Լիլիթ Գրիգորյանին, ապա Դատարանը նշում է, որ Կառավարության պնդումը չի հիմնավորվում ներպետական դատարանների եզրահանգումներով, որոնք գտել են, որ բոլոր դիմումատուներն ունեցել են բնակելի տարածության օգտագործման իրավունք, եւ որոնք որոշել են դադարեցնել այդ իրավունքը հատուցում վճարելու միջոցով:

27. Դատարանը եզրակացնում է, որ սույն գործով բոլոր դիմումատուներն ունեցել են քննարկվող տան նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք, եւ այդ իրավունքի դադարեցումը՝ Երեւան քաղաքի կենտրոնում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով, համարվում է գույքից զրկելու միջոցով կատարված միջամտություն դիմումատուների՝ գույքից անարգել օգտվելու իրավունքին (նույն տեղում, §§ 59 եւ 61): Հետեւաբար, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին դիմումատուների բողոքի անհամապատասխանության վերաբերյալ Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

բ) Արդյոք գույքի նկատմամբ դիմումատուների իրավունքին կատարված միջամտությունը եղել է հիմնավորված

28. Դատարանը վերահաստատում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջնային եւ կարեւորագույն պահանջն այն է, որ պետական մարմինների միջամտությունը գույքից անարգել օգտվելու իրավունքին պետք է լինի օրինական. առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ թույլատրվում է գույքից զրկելը միայն «այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով», իսկ երկրորդ պարբերությունը սահմանում է, որ պետությունն իրավասու է սեփականության օգտագործման նկատմամբ իրականացնելու վերահսկողություն՝ «օրենքներ» կիրառելու միջոցով: Ավելին, օրենքի գերակայությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունք, ներհատուկ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (տե՛ս *Հունաստանի նախկին թագավորը եւ այլք ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Former King of Greece and Others v. Greece* [GC]], թիվ 25701/94, §79, ՄԻԵԴ 2000-XII):

29. Դատարանը, այնուհետեւ, վերահաստատում է, որ «այն պայմաններով, որոնք սահմանված են օրենքով» արտահայտությունն առաջին հերթին ենթադրում է համապատասխանաբար մատչելի, բավականաչափ հստակ եւ կանխատեսելի ներպետական իրավական նորմերի առկայությունն ու դրանց պահպանումը (տե՛ս *Լիտգոուն եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Lithgow and Others v. the United Kingdom*], 1986 թվականի հուլիսի 8, §110, շարք Ա թիվ 102. *Հենրիխիսն ընդդեմ Ֆրանսիայի* [*Hentrich v. France*], 1994 թվականի սեպտեմբերի 22, §42, շարք Ա թիվ 296-A, եւ *Բեյելերն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Beyeler v. Italy* [GC]], թիվ 33202/96, §109, ՄԻԵԴ 2000-I):

30. Դատարանը նշում է, որ նախկինում այն ուսումնասիրել է բողոք, որը վերաբերել է Երեւան քաղաքի կենտրոնում կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով դատարանների կողմից օգտագործման իրավունքի դադարեցմանը՝ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիմքով, եւ գտել է, որ գույքի նկատմամբ դիմումատուների իրավունքին կատարված այդպիսի

միջամտությունը եղել է կամայական եւ անօրինական (տե՛ս *Մինասյանի եւ Սեմերջյանի գործը*՝ վերելում հիշատակված, §75-76):

31. Դատարանը նշում է, որ սույն գործում քննարկվող տան նկատմամբ դիմումատուների օգտագործման իրավունքը դատարանների կողմից դադարեցվել է միեւնույն նպատակով՝ չնայած այն հանգամանքին, որ հղում է կատարվել Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասին: Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ տվյալ հոդվածով սահմանվում է բացառապես հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հնարավորությունը, եւ այն որեւէ նշում չի պարունակում բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը): Ուստի, դիմումատուների օգտագործման իրավունքը դադարեցվել է այն իրավական նորմերի հիման վրա, որոնք կիրառելի չեն եղել նրանց գործի նկատմամբ: Դատարանը համարում է, որ օգտագործման իրավունքի նման դադարեցումը անխուսափելիորեն կհանգեցնէր անկանխատեսելի կամ կամայական հետեւանքների եւ դիմումատուներին կգրկէր իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանությունից: Հետեւաբար, նման իրավական հիմնավորմամբ միջամտությունը դիմումատուների՝ գույքից օգտվելու իրավունքին չի կարող բնութագրել այլ կերպ, քան որպես կամայական եւ անօրինական միջամտություն (տե՛ս, *mutatis mutandis* (*համապատասխան փոփոխություններով*), *Մինասյանի եւ Սեմերջյանի գործը*՝ վերելում հիշատակված, §75-76):

32. Նման եզրակացությամբ ոչ նպատակահարմար է դառնում հավաստիանալ՝ հասարակության գերակա հանրային շահի եւ անհատի հիմնարար իրավունքների պաշտպանությանը ներկայացվող պահանջների միջեւ արդարացի հավասարակշռություն ապահովված լինելու հարցում (տե՛ս *Սպորրոնգը եւ Լոնրոթն ընդդեմ Շվեդիայի* [*Sporrong and Lonnroth v. Sweden*], 1982 թվականի սեպտեմբերի 23, § 69, շարք Ա թիվ 52, եւ *Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [ՄՊ] [*Iatridis v. Greece* [GC]], թիվ 31107/96, §62, ՄԵԵԴ 1999-II):

33. Հետեւաբար, տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի

խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

34. Դիմումատուները, այնուհետև, բողոքել են, որ իրենց գույքից գրկելը հանգեցրել է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման, եւ որ դատական վարույթն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտմամբ:

35. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով այս բողոքների քննությունն իր իրավասության շրջանակներում է, գտնում է, որ դրանցում չի արձանագրվում Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով նախատեսված իրավունքների եւ ազատությունների որեւէ խախտում: Հետեւաբար, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն, գանգատի այս մասը պետք է մերժվի՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

36. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

37. Արդարացի փոխհատուցման վերաբերյալ պահանջը դիմումատուները ներկայացրել են Դատարանի կողմից սահմանված ժամկետից հետո: Համապատասխանաբար, Դատարանը համարում է, որ այդ կապակցությամբ որեւէ գումար չնորհելու հիմքեր առկա չեն (տե՛ս, օրինակ, «Վեսթ Սս» *հեռուստաընկերությունը եւ Ռոզալանդ Պենսյոնիստպարտին ընդդեմ Նորվեգիայի*

[*TV Vest AS and Rogaland Pensjonistparti v. Norway*], թիվ 21132/05, § 80, 2008 թվականի դեկտեմբերի 11, եւ *Մարուզակն ընդդեմ Լեհաստանի* [*Maruszak v. Poland*], թիվ 11253/07, § 62, 2009 թվականի հուլիսի 7):

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Որոշում է* թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով դիմումատուների ներկայացրած բողոքներն այդ հոդվածի դրույթներին չհամապատասխանելու վերաբերյալ Կառավարության առարկությունը միացնել գործի ըստ էության քննությանը եւ մերժել այն.
2. *Հայտարարում է* դիմումատուներին գույքից զրկելու վերաբերյալ բողոքն ընդունելի՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, իսկ զանգատը մնացած մասով՝ անընդունելի.
3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.
4. *Վճռում է*, որ դիմումատուներին որպես արդարացի փոխհատուցում որեւէ գումար չնորհելու հիմքեր առկա չեն:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2010 թվականի հուլիսի 20-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտյագո Կեսադա

Ժոզեփ Քասադեալ

Քարտուղար

Նախագահ